ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «02» ապրիլ 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 92-Ա/Ք

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - 2025» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 22-ի N 425-Ա/2 հրամանը՝ «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր - 2025» մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝

1) ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը,

2) ապահովել մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչությանը (պետ՝ Լուսինե Գրիգորյան)՝

1) կազմակերպել մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

3) կազմակերպել մրցույթի արդյունքներով շահառու ճանաչված նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի կնքումը:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի առցանց համակարգով ընդունումը,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

3) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտահետազոտական խմբերի ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը:

4. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը,

2) ապահովել նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցության գումարների սահմանված կարգով տրամադրումը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ